## Հաշվետվություն

Ես՝ Էլինե Նազարյանս, 2025 թվականի փետրվարի 06-ից աշխատում եմ Կադաստրի կոմիտեի Գնումների կազմակերպման բաժնում՝ որպես փորձագետ:

Կազմել եմ գնահատող հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները, պայմանագիր կնքելու մասին որոշումները, կնքված պայմանագրի մասին հայտարարությունները և գնման ընթացակարգերի հետ կապված այլ անհրաժեշտ փաստաթղթերը: Պատրաստել եմ հրավերները՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, ընթացիկ տարում կազմել եմ տարվա գնումների պլանը, կազմել եմ գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի, գնումների համակարգող ձևավորելու մասին հրամանի նախագծերը, կատարել եմ գնման ընթացակարգերի հաշվետվությունների, գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերի լրացում PPCM համակարգում և ներկայացնում բաժնի պետի հաստատմանը, PPCM համակարգի իմ անձնական էջով լրացրել և բաժնի պետի հաստատմանն եմ ներկայացրել գնման ընթացակարգերի հաշվետվությունները, գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերը, գնահատել եմ գնման հայտի կազմման համապատասխանությունը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: ԵԱՏՄ պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված procurement.am կայքում ռուսերեն և հայերեն լեզուներով հրապարակել եմ գնումների հայտարարությունը և հրավերը, հրավերներում կատարված փոփոխությունները և դրանց վերաբերյալ մասնակիցներին տրամադրված պարզաբանումները, գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և պայմանագրում կատարված փոփոխությունների մասին հայտարարությունները: Ապահովել եմ ԵԱՏՄ պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում պահանջվող փաստաթղթերի կազմումը ռուսաց լեզվով: Կազմակերպել եմ Կադաստրի կոմիտեի կարիքների համար հերթի տերմինալների ձեռքբերման՝ «ԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09», գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման՝ «A8276248407», ջրի ձեռքբերման՝ «A2870732524», մաքրման ծառայությունների ձեռքբերման՝ «B5740875608», ՀԾ հաշվապահ ծրագրի սպասարկման ծառայությունների ձեռքբերման՝ «A3817470894», տանիքների մետաղով ծածկման աշխատանքների՝ «A7779163193», ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման՝ «ԿԿ-ՄԱԾՁԲ-25/08», գեներատորի ձեռքբերման՝ «B0354122668», սերտիֆիկատների ծառայությունների ձեռքբերման՝ «B3542669624», Կադաստրի կոմիտեի կարիքների համար պահնորդային ծառայությունների ձեռքբերման՝

«ԿԿ-ԷԱՃԾՁԲ-26/01», օդորակիչների վերանորոգման և սպասարկման ծառայության ձեռքբերման «ԿԿ-ԳՀԾՁԲ-25/17», Կադաստրի կոմիտեի կարիքների համար փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման՝ « B1191284689», համակարգչային և օժանդակ սարքավորումների սպասարկման ծառայությունների՝ «ԿԿ-ԳՀԾՁԲ-26/02», վառարանների և ծխնելույզների մաքրման ծառայությունների՝ ՝ «ԿԿ-ԳՀԾՁԲ-26/03», գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման՝ «A6343549038» ընթացակարգերը:

Կազմել և գլխավոր քարտուղարի հաստատմանն եմ ներկայացրել ընթացակարգերի հրամանները, պատրաստել եմ հրավերները՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, կազմել և գնահատող հանձնաժողովի ստորագրմանն եմ ներկայացրել բացման և գնահատման արձանագրությունները, պայմանագիր կնքելու որոշման, շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները, պատրաստել եմ պայմանագերի նախագծերը և դրանք ներկայացրել Ֆինանսատնտեսագիտական և Իրավաբանական վարչությունների պետերին՝ համապատասխան եզրակացություն ներկայացնելու: Կազմակերպել եմ պայմանագրերի ստորագրման գործընթացը, որից հետո պայմանագրերը մուտքագրել եմ համակարգ, պատրաստել և հրապարակել եմ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները:

Գնումների կազմակերպման բաժնի

պետ՝Հ. Մանուկյան _____

Է.Նազարյան _____

05.09.2025թ.